

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 թ. ՄԱՅԻՄԻ 27-Ի ՆԻՍՏԻ ԹԻՎ 13 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օրակարգում՝

1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2023-24 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի դեկան Ս. Վ. Ղուկասյան

- Հարգելի գործընկերներ՝ Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի 16 անդամներից ներկա են 14-ը: Այս օրվա աշխատանքային օրակարգը ուղարկված էր բոլորիդ. ի՞նչ առաջարկներ ունեք:
- Որոշեցին հաստատել օրակարգը և անցնել քննարկման:

Պրոֆ. Ս. Վ. Ղուկասյան, - Այժմ Լուենք Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Շ. Ա. Մարգարյանի հաշվետվությունը 2023-24 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:

1. Շ. Ա. Մարգարյան, - Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնում կատարված աշխատանքների մասին հաշվետվությունը ներկայացնում է մվերջին անգամ: Ամբիոնում իրականացվում են 2 դրամաշնորհային ծրագրեր և մեկ ծրագիր ներկայացվել է մրցույթի: Ամբիոնը սպասարկում է Քիմիայի ֆակուլտետի քիմիաբաժնի և սննդի անվտանգությունը բաժնի ֆակուլտետի և մագիստրատուրայի բաժնիներին, Կենսաբանության ֆակուլտետի 2 բաժնիներին ֆակուլտետի ուսանողներին, ֆարմացիայի ինստիտուտին: Այս պահին ամբիոնում ավարտական աշխատանք են կատարում 4 ուսանող ֆակուլտետի բաժնից (2

նուսանող քիմիա քաժնից և 2 նուսանող սննդի անվտանգության քաժնից) և 4 նուսանող (3 նուսանող քիմիա քաժնից և 1 նուսանող սննդի անվտանգության քաժնից) իրականացնում են իրենց մագիստրոսական թեզերը: Ամբիոնում աշխատանքները ընթանում են նորմալ հունով, որի արդյունքում հրատարակվել են հաշվետու տարում ամբիոնի աշխատակիցների կողմից հրատարակվել է 9 գիտական հոդված և 9 միջազգային թեզիսներ: Ամբիոնի պրոֆեսոր արասալիսան կազմը ակտիվորեն մասնակցել է ֆակուլտետում տեղի ունեցող գիտական սեմինարներին: Այստեղ գործում է միջամբիոնային գիտական համագործակցությունը: Այսքանի հետևում է հարցվում են Բակալավրիատական ծրագրերի պատասխանատուի՝ Լիանա Գաբրիելյանին: Ամբիոնի կողմից կարդացվող կարևորագույն առարկաներից մեկը՝ Կոլոնիալ քիմիան, որ ամբիոնի անբաժան մասն է տեղափոխվել է կամընտրական բլոկ, որն անթույլատրելի է և իհարկե տեղի է ունեցու ժամերի կրճատում: Ինչով է դա պայմանավորված և ինչպես կբացատրեք:

- Լիանա Գաբրիելյան, Բակալավրիական ծրագրի պատասխանատու

- Այն կոլոնիալ քիմիայից նշված առարկան տարվել է կամընտրական բաժնի միայն մեկ պատճառով, որ պեսուդո և՛ քիմիկները և սննդի անվտանգության քաժնի նուսանողները կարողանան մասնակցեն դասընթացին և ժամային վերադարձում չլինին: Այդ առարկան կլինի միասնական կուրս: Այս փաստը բքննարկվել է նաև մեթոդաբանության նիստում՝ ծրագրերի վերանայման և քննարկման ժամանակ:

- Ամբիոնի վարիչ իելույթից և որոշ հարցերի քննարկումից հետո Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը

-Որոշեց, բաց քվեարկությամբ, հաստատել Շ. Ա. Մարգարյանի հաշվետվությունը:

2. Նիստի նախագահ՝ Տ. Վ. Ղուկասյան, Ըստ օրակարգի այժ, լսելու ենք ՈւԳԸ նախագահ Անահիտ Ջիլիկյանի հաղորդումը հաշվետու տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Հաղորդումը ամբողջությամբ կցվում է:

Ելույթ ունեցողին հարցեր ուղղեցին Տ. Վ. Ղուկասյանը, Ռ. Պ Մխիթարյանը, Ն. Ա. Դուրգարյանը:

-Տ. Վ. Ղուկասյան – Ընթացիկ հարցերում ներկայացված է Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի կողմից՝ Ա. Ի. Մարտիրոսյանի և Գ. Ա. Շահինյանի «Մննդամթերքի ուսումնասիրման մեթոդներ» Ուսումնական ձեռնարկի քննարկման և հետագա ընթացք տալու հարցը:

Այս ձեռնարկի քննարկումը կայացել է նախ ամբիոնում և դրական է գնահատվել նման ձեռնարկի կիրառումը ուսումնական գործընթացում: Ամբիոնից գրախոսել և իր կարծիքն է հայտնել ք. գ. թ., ասիստենտ Ծ. Աղամյանը: Քննարկվել է մեթոդ խորհրդում, այժմ պետք է տրվի արտաքին գրախոսման: Արտաքին գրախոսման համար առաջարկում է մտալ մասնագիտացված կազմակերպության: Առաջարկ կա այն ուղարկել «FDA, Լաբորատոր

Համալիր 2012 «ԷՖ-ԴԻ-ԷՅ Լաբորատորիա» ՍՊԸ»: Մի փոքր տեղեկություն այս Լաբորատորիայի մասին «ԷՖ-ԴԻ-ԷՅ Լաբորատորիա» ՍՊԸ փորձարկման Լաբորատորիան շարունակաբար մասնակցում է միջլաբորատոր համեմատական փորձարկումների (ILC- Interlaboratory Comparisons) և համեմատական որակավորման փորձարկումների (PT-Proficiency Testings):

Լաբորատորիան մասնակցում է միայն ISO/IEC 17043 ստանդարտով հավասարմագրված պրովայդերների կողմից կազմակերպվող մասնագիտական փորձարկումներին:

Նմանօրինակ համեմատություններին պատակն է գնահատել չափումների/փորձարկումների ճշգրտությունը, մշտապես

վերահսկել կատարվող փորձարկումներին որակը և հետևողականորեն կիրառել և գնահատել որակի հսկման պահանջները:

Միջազգային հավատարմագրման համար մասնակցությունը նման փորձարկումներին հանդիսանում է պարտադիր պահանջ, քանի որ գալիս է ապացուցելու, որ տվյալ փորձարկման լաբորատորիան մշտապես վերահսկում է իր կողմից կատարվող փորձարկումներին որակը և ապահովում մաքսիմալ ճշգրիտ արդյունքներ:

Որոշեցին – բաց քվեարկությամբ արդյունքում երաշխավորել՝ Ա. Ի. Մարտիրոսյանի և Գ. Ա. Շահինյանի «Սննդամթերքի ուսումնասիրման մեթոդներ» ուսումնական ձեռնարկի հետագա ընթացքը և տալ արտաքին գրախոսման «ԷՖ-ԴԻ-ԷՅ Լաբորատորիա» ՍՊԸ փորձարկման լաբորատորիա:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր  
Տ. Վ. Ղուչիկյան

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի  
քարտուղար,  
Մ. Ա. Սամվելյան

դոցենտ